ՏԵՂԵԿԱՆՔ Տ. ԿՈՐԻՒՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՀԱՆԴԷՍ

Շաբաթ, Մայիսի 27-ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահում տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի ամավերջի հանդէսը:

Մանկապարտէզի Ծիլ, Կոկոն եւ Ծաղիկ բաժնի փոքրիկները սահուն արտասանութեամբ եւ մանկական երգերի գեղեցիկ կատարմամբ անմոռանալի պահեր պարգեւեցին իրենց ծնողներին եւ բոլոր ներկաներին: Հանդիսականները հիացմունք ապրեցին նաեւ փոքրիկների ներկայացրած թատերական կարճատեւ բեմականացումից:

Այս տարի Ծաղիկ բաժնից աւարտեցին վեց փոքրիկներ, ովքեր իրենց վկայականները ստացան Պատրիարք Սրբազանից: Յաջորդ ուսումնական տարում, նրանք կը համալրեն Վարժարանի Նախապատրաստական բաժնի Ա դասարանը:

Հանդէսի աւարտին խօսքով հանդէս եկաւ նախ Վարժարանի Տեսուչ Հոգշ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանը եւ ապա փակման խօսքով՝ Պատրիարք Սրբազան Հայրը: Նրանց խօսքում կար մի ընդհանուր մտահոգութիւն, այն է՝ Վարժարանի աշակերտների թուի տարէց տարի կրճատուելը, ինչը պայմանաւորուած է նախ համայնքի բնական աճի նուազմամբ, ինչպէս նաեւ հայ աշակերտների օտար դպրոցներ յաճախելու փաստով: Իր խօսքում Պատրիարք Սրբազան Հայրը մէկ անգամ եւս շեշտեց հայեցի կրթութեան կարեւորութիւնը եւ յորդորեց հայ ծնողներին՝ իրենց զաւակների կրթութեան համար նախընտրել հայկական միակ Վարժարանը:

Հանդէսը աւարտուեց Սրբազան Հօր «Պահպանիչով» եւ «Հայր Մեր»-ի խմբային երգեցողութեամբ:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Կիրակի, Յունիսի 4-ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահում տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի ամավերջի հանդէսը:

Հանդէսը բացուեց Հայաստանի Հանրապետութեան հիմնի եւ Ժառանգաւորաց Վարժարանի քայլերգի կատարմամբ, որին յաջորդեց Վարժարանի Փոխ-Տեսուչ Հոգշ. Հայկազուն Աբղ. Եղիայեանի բացման խօսքը:

Սաները, այնուհետեւ, տպաւորիչ կատարմամբ հանդէս եկան ազգային եւ դասական երգերով, իսկ Սահակ Յովակիմեանը եւ Արմէն Պուլուլեանը գեղեցիկ կերպով դասական կտորներ կատարեցին դաշնամուրի վրայ: Ընծայարանի շրջանաւարտներից Բարշ. Աւետիք Սրկ. Ալէքեանը հանդէս եկաւ հայերէն ուղերձով, իսկ Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտներից հայերէն, անգլերէն եւ եբրայերէն ուղերձներով յաջորդաբար հանդէս եկան Արտակ Վարդանեանը, Յովհաննէս Մարտիրոսեանը եւ Իվան Գեադայեանը: Նրանք բոլորն իրենց խօսքում երախտագիտութիւն յայտնեցին Սուրբ Աթոռոյս Գահակալին եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեանը ոչ միայն իրենց ստացած ընդհանուր ուսման եւ գիտելիքների համար այլ նաեւ իրենց տրուած հոգեւոր եւ բարոյական կրթութեան եւ դաստիարակութեան համար եւ իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին շարունակելու իրենց ծառայութիւնը Առաքելական այս Սուրբ Աթոռին: Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Մրցանակի եւ խրախուսման արժանացան իւրաքանչիւր դասարանի ուսման մէջ առաջին եւ երկրորդ հանդիսացած,

digitised by A.R.A.R.@

բարձրագոյն միջին բերած, ինչպէս նաեւ կարգապահութեան մէջ լաւագոյն ճանաչուած սաները:

Հանդէսի վերջին բաժնում տեղի ունեցաւ վկայականների յանձնումը: Ընծայարանի բաժնի շրջանաւարտներն էին Բարշ. Սարկաւագներ Աւետիք Ալէքեանը եւ Գրիգոր Աւագեանը, իսկ Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտներն էին Արտակ Վարդանեանը, Արմէն Պուլուկեանը, Հրայր Լալայեանը, Յովհաննէս Մարտիրոսեանը, Աթանաս Կիրակոսեանը եւ Իվան Գեադայեանը: Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտները յաջորդ ուսումնական տարում պիտի շարունակեն իրենց ուսումը Ընծայարանի առաջին դասարանում:

Վերջին տարիներում ձեւաւորուած աւանդութեանը հետեւելով շրջանաւարտները դրամական նուէրներ ստացան Երուսաղէմի Հայոց Բարեսիրաց Միութեան կողմից: Նուէրները շրջանաւարտներին յանձնեցին Միութեան Փոխ-Առենապետ Տիար Գէորգ Ալէմեանը եւ Տիար Արամ Խաչատրեանը: Շրջանաւարտները նուէրներ ստացան նաեւ Աւագեան քոյրերի կողմից:

Հանդէսի աւարտին, Պատրիարք Սրբազանը իր փակման խօսքում շնորհաւորելով շրջանաւարտներին մասնաւորապէս նշեց. «Էջմիածնի, Անթիլիասի, Կ. Պոլսի եւ Միացեալ Նահանգների Հայ Հոգեւոր Ճեմարաններից իւրաքանչիւրը իր կարիքների համաձայն է ծրագրում հոգեւոր սպասաւորների պատրաստութիւնը: Երուսաղէմի Միաբանական կենցաղն եւ հոգեւոր պարտաւորութիւնները իւրայատուկ պահանջներ ունեն: Մեզ համար ուրախալի է լսել ձեր իսկ վկայութեամբ, որ Ժառանգաւորաց Վարժարանում կարգ ու կանոնը խստապահանջ են, այդուհանդերձ՝ յաղթահարելի:

Հանդէսը աւարտուեց Սրբական Հօր «Պահպանիչով» եւ «Հայր Մեր»-ի խմբային երգեցողութեամբ:

«ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՆՉԻՒՆՆԵՐ» ՀԱՄԵՐԳԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Շաբաթ, Յուլիսի 24-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի եւ Աւստրիական Հիւրատան համագործակցութեամբ, Պատրիարքարանի ընդունելութեան դահլիճում տեղի ունեցաւ «Երուսաղէմի Հնչիւններ» համերգը: Այն նուիրուած էր աւստրիացի աշխարհահռչակ երգահան եւ երաժշտագէտ Վոլֆգանգ Մոցարտի ծննդեան 250 ամեակին:

Համերգի առաջին բաժնում, Հոգշ. Իսահակ Աբղ. Մինասեանի բացատրական խօսքից յետոյ, «Լարային Կվինտէտ»-ը կատարեց Ֆրանց Շուբէրտի չորս գործեր: Կվինտէտը կազմուել է 1998-ին եւ բաղկացած է երկու ջութակահարներից, մէկ ալտից եւ երկու թաւջութակահարներից: Կազմաւորումից ի վեր նրանք համերգներով հանդէս են եկել մի շարք երկրներում, ինչպէս, Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Մեքսիկայում, Եւրոպական երկներում եւ այլուր:

Երկրորդ բաժնում «Կլարինէտ Կվինտէտ»-ը կատարեց Վոլֆգանգ Մոցարտի չորս գործեր: Կվինտէտը բաղկացած է չորս կլարինէտից, երկու ջութակահարներից, մէկ ալտից եւ մէկ թաւջութակահարից:

Այսպիսով, այդ երեկոյ նրանք ներկայացրեցին կամերայի պատմութեան մէջ երկու բացառիկ ներկայացուցիչների գործերը: Նրանց ստեղծագործութիւնները առանձնանում են իրենց յօրինուածքով, որոնք դարձան իրենց դարաշրջանի ուղենիշը: Աւելի քան 200 տարի այս

digitised by A.R.A.R.@

գլուխգործոցների կատարումները մեծ խանդավառութիւն եւ հիացմունք են պատճառել տարբեր լսարանների:

Ի դէպ համերգին ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրը, Իսրայէլում Աւստրիայի Դեսպանը եւ մեծ թւով օտար եւ հայ համայնքից հրաւիրեալներ:

Համերգի աւարտին, Գերշ. Արիս Եպս. Շիրվանեանի գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքից յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը նրանց նուիրեց հայկական յախճապակիէ ափսէ, որի վրայ պատկերուած էր Դաւիթ Մարգարէն իր տաւիղով:

ՍԱՐԿԱՒԱԳԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏՈՒՌՈՒՄ

Ուրբաթ, Յուլիսի 28-ին, երեկոյեան ժամերգութեան աւարտին տեղի ունեցաւ ուրարակիր Արթուր Պալոյեանի կիսասարկավագի աստիճանի տուչութեան արարողութիւնը: Արթուր Պալոյեանը Գերշ. Լուսարարապետ Սրբազանի եւ Հոգշ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի ուղեկցութեամբ առաջնորդուեց Սուրբ Էջմիածնի Մատրան փոքր ատեան, ուրտեղ համապատասխան աւետարանական ընթերցուածքներից յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը կատարեց կիսասարկաւագի աստիճանի տուչութեան արարողութիւնը:

Յաջորդ օրը, պատարագի ընթացքում կիսասարկաւագ Արթուր Պալոյեանը խարտաւիլակ Հոգշ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի եւ առընթերակայ Հոգշ. Գուսան Վրդ. Ալճանեանի ուղեկցութեամբ առաջնորդուեց դէպի Սուրբ Էջմիածնի Մատրան աւագ խորան, ուրտեղ ձեռնադրեալը ի նշան աշխարհից հրաժարման շրջուեց դէպի ժողովուրդը՝ բաշուկները վեր բռնած եւ ապա աւետարանական համապատասխան ընթերցումներից յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց սարկաւագի ձեռնադրութիւնը:

Նոր ձեռնադրեալին տրուեց պատարագի ընթացքում Աւետարան ընթերցելու եւ վերաբերում կատարելու իրաւունք:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Շաբաթ, Յունիսի 3-ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահում տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ամավերջի հանդէսը:

Վարժարանի սաները նախ երգեցին Հայաստանի Հանրապետութեան հիմնը եւ ապա Սրբոց Թարգմանչաց Վարժարանի օրհներգը, որին յաջորդեց շրջանաւարտներից Արմէն Ալէմեանի բացման խօսքը: Այնուհետեւ ուսանողները փայլուն կերպով երգեցին «Մանկութիւնը Մեր» եւ «Ուսուցիչ Թանկագին» երգերը: Մի քանիսը հանդէս եկան գեղեցիկ արտասանութիւններով, իսկ աւարտական դասարանի շրջանաւարտներից Մարալ Շէմմէսեանը հանդէս եկաւ արաբերէն խօսքով, Խորէն Սարիբեկեանը՝ Անգլերէն խօսքով, Զօհրապ Գրիգորեանը՝ Եբրայերէն խօսքով, իսկ Քրիստին Նաճարեանը՝ հայերէն ուղերձով: Իրենց խօսքում նրանք երախտագիտութիւն յայտնեցին Երուսաղէմի գահակալին, այն բանի համար, որ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի անհրաժեշտ կարիքներն ու ծախսերը հոգում է Պատրիարքարանը, որով եւ հնարաւորութիւն է տրւում Երուսաղէմի բոլոր հայ մանուկներին հայեցի կրթութիւն ստանալ հայրենիքից դուրս:

digitised by A.R.A.R.@

Յայտագրի երկրորդ մասում Հոգշ. Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանը ներկայացրեց տեսչութեան տարեկան տեղեկագիրը: Ըստ ներկայացուած տեղեկագրի 2005-2006 թթ. ուսումնական տարուայ կրթական ծրագիրը լուրջ փոփոխութիւնների է ենթարկուել: Երկրորդական բաժնի մէջ աւելացել է եբրայերէն լեզուի դասերը, նաեւ G. C. E. Անգլիական քննութիւնների ծրագրի մէջ աւելացել են երկու նոր առարկաներ. Mathematics & Statistics Advance Level եւ Sociology Advance Level: Դասաւանդուել է նաեւ Հրէական Համալսարանի մուտքի քննութեան (Psychometric) յատուկ դասընթացքներ: Ապրիլ ամսին բոլոր շրջանաւարտները մասնակցել են (Psychometric) քննութեան:

Ապա տեղի ունեցաւ մրցանակների բաշխում: Մրցանակների արժանացան աւարտական դասարանի ուսման մէջ բարձրագոյն եւ երկրորդ հանդիսացած ուսանողները, վարքի եւ կարգապահութեան մէջ լաւագոյն ճանաչուած ուսանողը, օտար լեզուների մէջ բարձրագոյն նիշ ապահոված ուսանողը, ինչպէս նաեւ կրօնագիտական եւ ընդհանուր գիտութիւնների մէջ բարձրագոյն միջին բերած ուսանողը:

Մրցանակաբաշխութեանը յաջորդեց վկայականների յանձնումը: Այս տարուայ շրջանաւարտները վեցն էին:

Հանդէսի աւարտին Պատրիարք Սրբազանը իր փակման խօսքում շեշտեց սփիւռքում տրուած հայեցի կրթութեան կարեւորութիւնը, իսկ ուսանողներին ուղղած իր խօսքում ասաց. «Այժմ ուսման մի նոր անդաստան է բացւում ձեր առջեւ: Յուսանք, Վարժարանում ստացած ձեր գիտելիքները պիտի օգնեն Ձեզ կրթական նոր հաստատութիւններում ձեր ուսումնառութեանը: Այս համոզմամբ պիտի շարունակենք Վարժարանի նոր տարեշրջանը՝ ջամբելով հայ նոր սերունդին հայեցի կրթութիւն»:

Հանդէսը աւարտուեց Պատրիարք Սրբազանի «Պահպանիչով» եւ «Հայր Մեր»-ի խմբական երգեցողութեամբ:

ԿՈՐԻՒՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@